



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 9 ՄԱՅԻՍ 1887

ԹԻԻ 3872

ՄԱՅԻՍԻԱՍ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ծեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի: Գաւառաց համար 70 դր2: Եւ օտար երկրաց համար 15 ֆըրանք: Բաժանորդագրութեանը յրկեւրէ Ե առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Սաւիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Ազգային Ս. Յակոբեան հիւանդանոցի գլխավոր — Ընթերցողական սեռի արուեստանոցն Հայ Գրականութիւնն ի Թուրքիա Իգական սեռի արուեստանոցն Հայք եւ արուեստը ՊԱՏՈՆ ԶՈՒՐՈՎ Դարաբարդի աստղագէտը Բաղաբական Օրագիր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 8 ՄԱՅԻՍ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Ս. ՅԱԿՈԲԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ԴԵՊՐԵ

Անցեալ եւ այս շաբաթներու մէջ բաւական խօսուեցաւ անախորժ պատասխանի մը վրայ զոր, ըստ Արեւելի, տրւած է Հայ-հռոմէականաց Պատրիարքը: Պատրիարքի սպասաւորը ներկայանալով, «Էս ապրիլ, Ն. Սրբազնութեան, կաղաչէ որ հրաման տայ Ս. Յակոբի հիւանդանոցը զրկելու Բէ գեղեցիկ համար մի տղայ որ յանկարծ խելագարած է. Ն. Սրբազնութեան պատասխանը մերժողական եղած է, վասն զի խելագարեալը կը պատկանէր Հայաստանեայց եկեղեցւոյ:

Մենք այս լուրին զանազան պարագայներուն վրայ չենք ուզեր խօսիլ. բայց այն վրդովումը զոր նա առաջ բերած է պէտք է գոհունակութիւն պատճառէ: Արդարեւ կը տեսնենք որ Հայ-հռոմէական հասարակութիւնը բաւական դժգոհ է Արեւելէն, որ արձագանք եղած է այսպիսի եղելութեան մը լուրին: Եւ ինչո՞ւ այդ դժգոհութիւնը «Վասն զի, կը պատասխան-

ենք Հայ-հռոմէականք, անկարելի է որ այդպիսի խաւարամիտ բարբարոսական դէպք մը կարենայ տեղի ունենալ: միթէ կարելի՞ է որ մի Հայ, ինչ ալ լինի իւր կրօնքը, մէկ գիշերուան համար մերժուի մի Հայ հիւանդանոցէ, որ կրօնական Հայ հասարակութեան ալ պատկանի այդ հիւանդանոցը: Իսկ մենք եւս զայրացած ենք: Ի՞նչ, միթէ Հայ-հռոմէականք Հայ չենք որ չեն ուզեր լուսաւորչադաւան Հայ մը ընդունիլ իրենց հիւանդանոցին մէջ:»

Ինչպէս կը տեսնուի թէ՛ Հայ-հռոմէականք եւ թէ՛ մենք հաւասարապէս զայրացած ենք ազգային ըզգացմամբ: Հայ-հռոմէականք իրենց ազգային եւ մարդասիրական զգացմանց նախատինք կը համարին այդպիսի դէպքի մը գոյութիւնը. մենք եւս իբր Հայ վերաւորուած ենք: Ուրեմն ո՛չ մենք եւ ո՛չ նոքա միմեանց դէմ ասանկութիւն չենք կարող ունենալ, այլ խնդրոյ առարկայն Հայ-հռոմէականաց Պատրիարքն է: Արդ՝ խնդիրն այս դէպքին ստոյգ կամ անստոյգ լինելուն վրայ է: Ի հարկէ կը փափագինք որ ստոյգ չլինի, սակայն Արեւել ո՛ր եւ է տարակուսանաց տեղի չթողուր, մանաւանդ որ Հայ-հռոմէականաց Պատրիարքարանի կողմանէ մինչև ցարդ եւ ոչ իսկ հերքում մը տրուեցաւ: Հայ-հռոմէականաց Պատրիարքը չէ կարող արհամարհական լուրթիւն մը պահել լրոյ մը վրայ՝ որ այսքան ընդհանուր աղմուկ յարոյց եւ վրդովում պատճառեց: Բայց եթէ իրենց Պատրիարքը կը լուէ, Հայ-հռոմէականք պարտական են իրենք քննութիւն բանալ: Եթէ եղելութիւնն ստոյգ է, բարոյապէս կը դատապարտեն իրենց Պատրիարքն. հակառակ պարագային մէջ ընդհանուր գոհունակութիւն մը պատճառելու առիթ կ'ունենան:

Ա. Ա.

ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ

Կրօնական Ժողովն հարկ համարեց ի Կ. Պոլիս կանչել Մաղնիսայի Շահապաղեան վարդապետն, որ ըմբոստ համարուելու համբաւը կը վայելէ: Իզմիրի առաջնորդարանն ոչ միայն չգործադրեց Պատրիարքի հրամաններն, այլ նաեւ յայտարարեց թէ դոցա գործադրութիւնը խռովութիւն պիտի պատ-

ճառէ Ժողովրդեան մէջ: Այս յայտարարութիւնը դուցէ կարեւորութիւն մը ունենար եթէ դադանապէս Պատրիարքարանի եւ Իզմիրի Առաջնորդարանի միջեւ բանակցութեանց առարկայ եղած լինէր, բայց երբ խնդիրն հրապարակ եղած է, ինչ որ ալ լինի պէտք է որ Պատրիարքարանի իշխանութիւնն յարգուի Շահապաղեան վարդապետ եթէ յանցաւոր է՝ պիտի պատժուի, եթէ յանցաւոր չէ՝ պիտի արձակուի. բայց եթէ յանցաւոր է կրօնապէս, Մաղնիսա, Իզմիր եւ ամբողջ Հայութիւնը կարող չեն պահանջել որ յանցաւորը չպատժուի:

Անգամ մը որ Շահապաղեանի առաջ տկարանայ Պատրիարքարանն, ալ այնուհետեւ պէտք է հրաժարական տայ իւր իշխանութեան. ամենափոքրիկ գիւշին իսկ իւր տէրտէրին համար կարող պիտի լինի բարոյական ըմբոստութեան դիմել: Եթէ Մաղնիսացիք մինչեւ իսկ կրօնափոխութեան դիմեն իրենց այդ վարդապետին համար, ատոր իսկ յանձնառու լինելու եւ ազգային իշխանութիւնն յարգել տալու է:

Բայց խնդիրը մինչեւ այստեղ չէ հասած. մինչև ցարդ թէ՛ եկեղեցական եւ թէ՛ աշխարհական դասերէն անդադար դժգոհութիւններ լսուած են այդ վարդապետին դէմ. ուրեմն ի՞նչ պէս հնար է ենթադրել թէ ամբողջ Ժողովրդը Շահապաղեանի հետ լինի:

Իզմիրի առաջնորդարանը խոհանութեան ապացոյց մը տուած պիտի լինէր եթէ երկդիմի ընթացքի մը չհետեւէր: Անցեալ դէպքերն աւելի խոհեմութեան կը հարկադրէին Իզմիրը:

Ա. Ա.

ՀԱՋԱՐ ԹՈՒՆԱԿ

Մայիսի 6 ին չորեքշաբթի օր «Արեւիկ» ի 1,000րդ թիւն հրատարակուելով, նոյն օրը վարչական խորհրդոյ անգամ եւ մի քանի բարեկամ երիտասարդ Մեծ կղզի երթալով, անդ ի խորհրդոյ գեղեցիկ խնջոյնով մը անցին բարեխառն «հազար բաւակ»ը:

Մաղրեմ լի յոյսերով որ մեր յաջորդի ալ 10,000րդ թիւը տօնեն:

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ԹՈՒՐԳԻԱ

Ժողովուրդի մը քաղաքակրթութեան հետ համընթաց կը զարգանայ նաեւ իւր գրական կեանքը. հելլենական, լատինական, արաբական եւ արդի եւրոպական ու ամերիկեան քաղաքակրթութեանց անբաժանելի է են ծաղկեալ գրականութիւնը. Հայ ժողովուրդը, առանց մեծ գեր վարելու քաղաքակրթութեան պատմութեան մէջ, ունեցած է՝ Միջին Դարուն՝ բաւական զարգացած գրականութիւն մը եւ իմաստասէր, բանաստեղծ, պատմագիր հեղինակներ, ոյց գործերն կը չահագորգեն այսօր նոյն իսկ եւրոպացի գիտնականներ ու բանասէրներ:

Հազար աղէտք, ջլաժելով մեր նախահարց բարոյական ոյժերն, մեր հին գրականութիւնն ալ վիճակեցին ուրիշ հին ժողովրդոց գրականութեան բախտին: Սակայն քար մ'յառաջ հայ մտքերն ունեցան փրկարար դարձում մը: Մխիթար ու Մխիթարեանք վերածնեցին մեր գրականութիւնն, Վենետիկ ու Վիեննա հրատարակեցին հին հեղինակներու երկեր եւ արտագրեցին նոր երկեր, ճոխացնելով հին հայերէնն:

Կոստանդնուպոլիս եւ Իզմիր շարունակեցին, եւ տունին մանաւանդ նոր հայերէնին զարգացում ու զօրութիւն. ունեցանք աշխարհիկ լեզուով գրող երանգիւն աշխատանքներ, որք փորձեցին կազմել ազգային նոր գրականութիւն մը, եւ յաջողեցան ունեցանք բերթողներ, վիպասաններ, թատերագուհներ, հրապարակագիրներ, թարգմանիչներ: Արիւն ու Նար Աէյ իրենց հայրենաշունչ բերթուածներով ցունց տուին հայ սրտերուն, որպէս հայ աշխարհէն կանուխ կորուսած այն երկուն հոգեխանդ բանաստեղծներն, Պէշկիթաշլեան ու Դուրեան, որք երգեցին հայրենիքի սէրն ու կնոջ սէրն, ճոխացնելով հայ բերթութիւնն. եւ հայ թատրոն. Իւթիւ-ճեան զարգացուց հայ լրագրութիւնն եւ աշխարհիկ լեզուն. Մամուրեան ոյժ տուաւ հայ հրապարակագրութեան եւ հայկական քրոնիկն ստեղծեց. Գարագաշեան ուսումնասիրեց ազգային պատմութիւնն, փորձելով զանազանել իրողութիւնն առասպելէն, գործ, որ դժբախտօրէն առնաւարտ մնաց: Նորայր աշխատեցաւ ճշգրէ հայ բառերու նշանակութիւններն եւ Այստրեան յատուկ խնամով քննեց աշխարհիկ լեզուին օրէններն, գործ կանոնաւորել ու ներդաշնակել փորձեցին Օտեան, որք բացեալն Նահապետ Ռուսինեան եւ ասպա նաեւ Չերազ. Խրիմեան ու Սրուանճեանց խօսեցան մեզ Հայաստանի վրայ, ու նկարեցին կենդանի գոյներով դաւառացի ժողովրդեան բարքերն. եւ մինչ մի կողմէն ի հայ կը վերածուէին բազմաթիւ եւրոպական վէպեր, գրուեցան նաեւ ազգային վէպեր, թէեւ յոյժ սակաւաթիւ, որք ուսումնասիրեցին ազգային կեանքն:

Այսպէս, մանաւանդ վերջին կէս դարուն մէջ, հայ աշխարհիկ գրականութիւնն յառաջադիմեց ի Թուրքիա. արտադրուեցան բազում երկեր, որք ստեղծ կը կրեն ազգային գրողի եւ են մերթ արդիւնք լուրջ աշխատութեանց. այլ մի քանի տարիներէ ի վեր Թուրքիոյ հայ գրական կեանքին մէջ եթէ չը կայ յետադիմութիւն, կարելի չ'է ըսել նաեւ թէ կայ յառաջադիմութիւն:

Նար-Աէյ, Խրիմեան, Հիսարեան, Շիւ-մանեան, Տէր Սարգսեան ոչ եւս կ'երեւին

գրական հորիզոնին վրայ, գէթ ոչ իսկ իրր գիտաւոր աստղ. եւ որպէս Հէքիմեան կը խեղդէր է՛ր երբեմն գրական աւելնն իւր սրտին խորն, աստարակալութեան դառնելու համար, որ պիտի ապրեցնէր զինք, նոյնպէս ալ Թէրզեան, Սիւան, Չերազ եւ Պէր-պէրեան գոսախօսութեան ու դպրոցի տնօրինութեան կը ստիպուին ստորագրուել գրագիտութիւնն. . . . Իզմիրի մէջ ոչ եւս կայ նախկին գրական գործունէութիւնն եւ Մամուրեան միայն կը մնայ կանգուն պատնէշին վրայ, հրատարակելով Արեւելեան Մահալն, մինչ Զիլինկիրեան, Մսերեան, Կոստանդեան, գրէիմէ ոչ եւս կու տան կեանքի նշան: Համեմատաբար շատ քիչ կը հրատարակուին այժմ երկար աշխատութեան արդիւնք եղող երկեր, որք հետք թողուն գրականութեան մէջ, Նաեւ, յոյժ սակաւաթիւ նոր գրիչներ միայն կու գան ի յայտ եւ ոչ եւս կ'եղէ գրագիտաց նոր սերունդ մը, յաջորդ Իւսկիւտարի Ճեմարանին եւ Մուրատեան, Ռաֆայէլեան, Շահ-նազարեան վարժարանաց աշակերտող գրագէտ սերնդոց:

Հայ գրականութեան զարգացման կասեմն ի Թուրքիա ունի բազմազան պատճառներ, որք կ'արժեն ուսումնասիրուիլ:

Եւ նախ, կայ ընդհանուր պատճառ մը, անողոր, անխուսափ, սխառնա՝ ոյր բարձուն ժամանակին ու պարագայից գործն է. Թուրքիոյ տնտեսական վիճակին աստիճանաբար վատթարացումն, աղքատութիւնն՝ որ մանաւանդ Հայոց մէջ կը ծաւալի իրր ախտ համաճարակ Նոր ժողովուրդն ստիպուած է շարունակ մտածել հայի խնդրոյն, չը կրնար իւր կեանքի մէջ տալ գրականութեան այն տեղ, ում արժանի է. նիւթական աշխատեցն կը մոռցնեն բարոյական պէտքերն. հայ գրագիտաց գործերն չ'են կարգաւոր, նախ զի ժողովուրդն սիրտ չ'ունի գրողելու գեղագիտութեամբ եւ ասպա զի գրամ չ'ունի գիրք գնելու համար: Նորա, որք գրականութեամբ կը դառնին ի մեզ, պարտին այլուր ապահոված ըլլալ իրենց ապրուստն: Քիչ Հայեր կան որք ապրին շնորհիւ գրագէտի արուեստին. ապաքէն կան մի քանի խմբագիրներ, որք գուցէ չահին ինչ որ անհրաժեշտ է բարեկեցիկ ապրելու համար, սակայն քանին, որք ստիպուած են գոհանալ ընդունիլն աննշան գոհմաններով: Ար ճանչեմ երիտասարդ հայ գրագէտ մը, որ, օժտեալ գրական չընալ տրամադրութեամբ, կը գրէ շարունակ՝ գրէիմէ տնտես տարիներէ ի վեր՝ եւ հակառակ իւր չարաչար աշխատութեան ու նշանաւոր տաղանդին, ամիսն հազիւ կրնայ չահիլ. . . երբ օսմանեան ոսկի. կը ճանչեմ ուրիշ հայ գրագէտ մ'ալ, աննման իւր տեսակին մէջ, որ նոյնքան հազիւ կրնայ չահիլ եւ ունի կին ու զաւակ, զորս պարտի ապրեցնել: Եւրոպացի մատենագիրն կը յաջողի իշխանի կեանք վարել շնորհիւ իւր գրչին, մինչ հայ գրագէտն հասարակ գործաւորի մ'ունեցած բարեկեցութիւնն իսկ չը կրնար վայելել: Բազմաթիւ երկեր կը հասնին յԵւրոպայ մինչեւ հարիւրաւոր տպագրութեանց, մինչ ի մեզ հրաշք մ'է տեսնել գրական գործ մ'որ հասնի երկրորդ տպագրութեան, թէեւ յաճախ կը տեսնուին հեղինակներ, որք կը գանգատին թէ չ'են կրցած հանել առաջին տպագրութեան իսկ ծախքն: Վերջին տարիներս տեսանք մի քանի հայ հեղինակներ ալ, որք մասնաւոր նամակներով ծանօթ ազգայնոց կը յղէին իրենց հրատարակած աշխատութիւնքն, յուսալով որ գէթ այդ միջոց ի պլ

կու տայ իրենց ստառել զայն. տեսակ մը պատուաւոր մուրացիկանութիւն, որ այնքան անհաշտելի է գրագէտի արժանապատուութեան հետ:

Նաեւ պէտք է խոստովանիլ թէ մեր ժողովրդեան մէջ զեռ չ'է ճանչցուած գրագէտներու բարոյական մեծ նշանակութիւնն: Ապաքէն ոչ եւս կը գտնուինք այն ժամանակներն, յորս գրագէտը եւ վարժագէտը արհամարհանաց եւեթ կ'արժանանային մեր ամիրայներէն, այլ գեռ ի մեզ գրագիտութիւնն չ'է ստացած այն տաշիւ գիրք, ում իրաւունք ունի Մատենագիրն յԵւրոպայ կարեւոր գեր կը կատարէ, կը փայլի Ճեմարաններու մէջ, Մերակոյտներու մէջ, Երեսփոխանական Ժողովոց մէջ, գրական եւ արուեստական շրջանակաց մէջ, ազնուապետական սրահներու մէջ, ամենուրեք ուր կայ մտաւոր կեանք. հարուստներն կը փնտռեն նոցա ընկերակցութիւն, զոր փառք կը համարին. իրենց. արուեստագէտներն խուսկ կը ծխեն նոցա առջեւ, զի գիտեն թէ յաճախ նոցա գնահատում է որ կրնայ շինել կամ քանդել իրենց համբաւ. գրագէտն անձնաւորութիւն մ'է գրագէտն զօրութիւն մ'է յԵւրոպայ: Ի մեզ գրագէտն է ոչինչ, մանաւանդ այն գրագէտն որ պարզ արուեստասէր մը չ'է եւ իւր գործոց հասոյթներէն ալ կը սպասէ ապրելու միջոց:

Եւ յետոյ, արուեստական կեանքի աղքատութիւնն ի մեզ կը սահմանափակէ գրական շրջանակն. չունինք թատր, երաժշտութիւն, նկարչութիւն, որք նիւթ հայթայթ են մեր գրագիտաց, որպէս յԵւրոպայ եւ յԱմերիկայ, ուր արուեստն գրականութեան մեծագոյն օժանդակն է. շատ մը խնդիրներ ալ որովք կրնային զբաղիլ հայ գրագէտը, ոչ եւս կրնտն ուսումնասիրել իրաց արդի վիճակին մէջ, գրական հրապարակին վրայ, ուր մատենագիրն այժմ պարտի լինիլ յաւէտ քան երբէք խոհեմ ու չընհայեաց:

Եւ սակայն, հակառակ բոլոր այս տնըպատտ պայմաններու, ուր կը գտնուի Թուրքահայոց գրականութիւնն, սա դեռ կ'արտագրէ բաւական գործեր, աւելի կամ նուազ կարեւոր:

Այժմ մեր գրական կեանքն զլիաւորաբար պարբերական հրատարակութեանց մէջ կը կեդրոնանայ: Անդ կու գան ի լոյս մերթ ընդ մերթ, թէեւ ցանցաւ, գրական ընտիր հատուածներ: Այդ հրատարակութեանց շնորհիւ մանաւանդ աշխարհիկ լեզուն հետգնտէ կը զարգանայ, կը կոկի, կը ճոխանայ եւ բերականական օրէնքներ ըստանալու կը հակադիմի: Օտեան, Մամուրեան, Իւթիւճեան, Զիլինկիրեան, Չերազ, Տէմիրճիպաշեան, Պէրպէրեան, Պարոնեան եւ ուրիշներ աշխարհաբարն կը գրեն այնքան ճարտարութեամբ որ յաճախ կը բարձրանայ մինչեւ գրաբարի գեղեցիկութեանց, ունենալով միանգամայն աւելի պարզութիւն: Հայ թերթերու եւ հանդէսներու մէջ այժմ կը մշակուի քրոնիկն, որ այնքան մեծ գեր կը վարէ արդէն Փրանսական մամլոյն մէջ, շնորհիւ Ռօշֆօրի, Օւէլիէն Շօլի, Ալպէն Ռօշֆի պէս ակաւաւոր քրոնիկագիրներու: Ի մեզ քրոնիկն սխառն է ձեռամբ Մամուրեանի, ոյր Շահնուր ծածկանուամբ հրատարակած յօդուածներն յԱրեւելեան Մահալ ճամբարի հրապարակներն գողտր ու զուարթ ոճի: Մամուրեանի հետ, վերջին տարեաց մէջ, քրոնիկի ոճով գրեցին Արմիւրեան, իւր Օրուան Կեանքն ուն մէջ, որք այնքան հետաքրքրութեամբ

միջոցներով, եւ Պետրոսեան, իւր Մար-
տիկէն եւ իւր խորագրերն ներքեւ հրատա-
րակած յօդուածոց մէջ, որք դժբախտօրէն
դադրած են երկու տարիէ ի վեր եւ ուր Ա.
Կոմիտէի անդամներն ի յայտ կու գայ իւր
հզօր նկարագրի տէր անձնաւորութիւն, ա-
զատախոհ, յանգուգն, դժգոհ զինք չըջապա-
տող իրերէն ու մարդերէն, խիզախ քննա-
դատ, այլ միշտ անկեղծ եւ ուղղամիտ: Աւեր-
ջին տարիներս հայ լրագրութիւնն ունեցաւ
նաեւ նոր ու նշանաւոր հրապարակագիր
մը, Բիւզանդ Բէշեան, որ օրն օրին քաղա-
քական կեանքն հայ ընթերցողաց ծանո-
թացնէր զատ, յուզեց նաեւ անտեսական,
ընկերական, ընտանեկան խնդիրներ, ազ-
գային շրջանակին մէջ. Բիւզանդ Բէշեան,
որ անխոնջ աշխատող մէկ, ի յայտ ածած է
միշտ իւր զրուածոց մէջ խորքնին միտք
մը եւ հազուադէպ ողջմտութիւն սակայն,
իւր արդի կացութեան մէջ, տարաբախտ-
օրէն կը կորցունէ նա տակաւ առ տակաւ իւր
խկնդրական նկարագիրը, եւ չարտագրեր բոլոր
ինչ որ իրմէն կը սպասուէ: Յովսէփ Եւե-
սեֆեան ալ նորութիւն մը ներմուծեց հայ
լրագրութեան մէջ, Արեւելի երեւումէն ի
վեր, ստեղծ հրատարակելով գիտական ընտիր
քոնիկներ, որք հայ ժողովրդեան գաղափար
կու տան քաղաքակրթ աշխարհին մէջ տեղի
ունեցած գիտական կարեւոր իրողութեանց
վրայ, եւ կը մշակեն հայ գրականութեան
գիտական ճիւղն, ոյր սակաւաթիւ աշխա-
տաւորաց մէջ կը գտնուին նաեւ Տօթեօս
Փէշտիմալեան, Տաղաւարեան, Հերոնիմոս
Բարսեղեան, Տօթեօս Յակոբեան: Աւեր-
ջապէս այդ պարբերական հրատարակու-
թեանց մէջ ի լոյս կը տեսնեն մերթ
միջոցով բերթութեան, ոյց երիտասարդ
հեղինակներն Փանոսեան, Սէթեան, Տէմիր-
ճիւղաշեան եւ այլք բարձր կը պահեն միշտ
հայ բանաստեղծութեան գրօն. եւ ուղե-
ւորութեանց նկարագրութիւնը, ոյց մէջ
նշանաւոր հանգիստացան Արապի Աւագին
ապագայութեան Եւրոպայի մէջ, աշխա-
տութիւն մեծախնամ, գեղազարդեալ
գրական գոհարներով, ի զգացումով ու
խորհուրդով, եւ Ձիւնիկիւրեանի Ռեքս-
թեան է Ա. Պօլեան, ուր ի յայտ կու գայ Թըշ-
աւանեան թարգմանչին եւրոպական նուրբ
ճաշակն:

Հրատարակուող ազգային հանդէսներու
մէջ յիշատակութեան արժանի են Բազմալեզու,
Արեւելեան Մամուլ, Մասիս, Երկրագնդի,
Խե-
կար, Գրական եւ Խնամարարական շաբաթ, Լե-
զու: Լեզու, զոր կը հրատարակէ Հ. Տէր-
վիւրեան, Հնդկաստանի Գաղութեան հեղինակն,
նորութիւն մէկ հայ գրականութեան հա-
մար: Գոհ ենք տեսնելով որ Երկրագնդի
վերստին սկսաւ հրատարակուիլ. նորա ան-
հետացումն իրական կորուստ մը պիտի ըլ-
լար: Ժամանակակից հայ գրականութեան
համար: Խեկար ալ, զոր Պարոնեան կը հրա-
տարակէ այժմ, կու գայ ամիսն անգամ մը
զուարթացնել զմեզ. Պարոնեան կը պահէ
դեռ այն բնական ձիւրք որով ծիծաղ միշտ
կ'աղղէ, ծիծաղ որ մինչ կը գծագրուի ընթ-
թանց վրայ, հետքեր կը թողու նաեւ մտքին
մէջ, զի Պարոնեան այն գրողներէն է որք
կը զրօնցեն այլ նաեւ կը ներշնչեն խորին
մտածումներ:

Գալով Գրական եւ Խնամարարական: Շաբ-
թաշաբաթ, Եղիա Տէմիրճիւղաշեան կը հրատա-
րակէ զայն գրեթէ հինգ տարիներէ ի վեր.
Եղիա Տէմիրճիւղաշեան, ինչ ալ որ ըսեն
ուրիշներ, հասարակ գրող է մը չէ: Բա-
զմալեզու տարիներէ ի վեր կը գրէ, կը գրէ շա-
բաթական, անյողողող կը գրէ: Թշնամի միտք

րինակութեան եւ ներդաշնակութեան սի-
րահար, մերթ հակասական իւր գաղափար-
ութեանց մէջ, այլ ընդ միշտ խանդակութ եւ
գրաւիչ, Տէմիրճիւղաշեան այն հեղինակնե-
րէն է որք գրագէտ ըլլալու համար կը ծը-
նին, ոյց համար գրելն հոգեկան պէտք մէկ:
Տէմիրճիւղաշեան կ'արտագրէ մերթ ընդ
մերթ նշանաւոր հատուածներ, որք ժամա-
նակակից հայ գրականութեան փառաւորա-
գոյն էջերն կրնան նկատուիլ. այլոց մէջ
մանաւանդ իւր Ողբն է վերայ Տէր-հայն, որ
հրատարակուեցաւ Շաբաթաշաբաթի Ա. տարւոյ Գ.
թիւոյն մէջ, հրաշակերտ մէկ փափկութեան,
զգայնութեան եւ ոճի գեղեցկութեան: Երբ
1883ին, ի Բարիզ, Օտեան էֆէնտիի յանձ-
նեցի Շաբաթաշաբաթի այդ թիւն, մեծանուն գը-
րագէտն, զոր մերթ կ'երթային այցելել յՕ-
թիւն, պարտեղներով շրջապատուած այն
նկարագրով Լիւքսին մէջ, ուր կ'ապրի, —այ-
ցելութիւնը ինձ համար յաւէտ քաղցր ու
անմոռաց — մեծանուն գրագէտն ըսաւ ինձ
թէ գոն ուրեք կ'ընթեռնու նմանօրինակ
սքանչելի բերթութեան հայ գրականու-
թեան մէջ, եւ մի քանի ամիս յետոյ Տէմիրճի-
ւղաշեանին ուղղեալ նամակի մը մէջ, որ
հրատարակուեցաւ իրեն ալբերցի «Հաճոյքով»
կը կարգաւորու գրածներդ. ուր կը փայլին
բու ճաշակը, բու սիրտը ու բու հոգիդ եւ
որոց մէջ է՝ զի կը սքանչանք դեռ եւ մենք
ընդ քեզեալ ծիրանիս հայ լեզուին:

Մեր ժամանակակից գրականութեան
նորութիւններէն մին ալ սա է թէ հայ կա-
նայր ալ կը սկսին այժմ զբաղիլ գրականու-
թեամբ: Կը գրեն վէպեր, նորավէպեր, ու-
տանաւորներ, յօդուածներ: Ոչ որ կ'ուրա-
նայ թէ կ'ոչ հոգին տուիլ արագ եւ սաս-
տիկ կը գրայ քան առն. ուստի եւ գրա-
գէտ կ'ենն դիւրաւ կրնայ յուզել ու գրա-
ւել իւր ընթերցողներն. եթէ չը կրնար այդ
գրագէտին շափ կորով եւ գիտութիւն ի
յայտ ածել, գէթ ունի նորա չափ, —եւ
գոհցէ մերթ աւելի իսկ, — փափկութիւն,
նրբութիւն ու շնորհ:

Մեր կին գրագէտներու մէջ անշին
տեղն կը գրուէ այժմ Տիկին Սրբուհի Տիւ-
սար: Պէշիկթաշեանի նշանաւոր աշակեր-
տուհին, երեք տարուան ժամանակամիջոցի
մէջ, հրատարակեց երեք վէպեր: Դատ խօս-
ուեցաւ այդ գործերու վրայ, եւ իրաւամբ:
Սրբուհի Տիւսար կը յուզէ կարեւոր խն-
դիրներ, կ'ընթ մ'համար յոյժ հազուադէպ
եղող արիւթեամբ եւ աշխոյժով: Իւր վէ-
պերու մէջ ի յայտ կու գան քանի բարոյա-
կան մը, սուրբ կրքեր, արդար զայրոյթ
մ'ընկերական անիրաւութեանց դէմ, ան-
զուսպ տեղի մ'աշխարհի գեղեցիկ բարձման
եւ մարդկային ազնուագոյն զգացմանց յաղ-
թանակին համար: Աստ չ'եմ ուզեր քննել
թէ մինչեւ որ աստիճան յաջողեցաւ Տիկին
Տիւսար իւր վիպասան, զի այս յօդուածն
պարզ ու հակիրճ տեսութիւն մէկ թուրքիոյ
հայ գրականութեան արդի վիճակին վրայ,
առանց գրողատական յաւակնութեանց.
սակայն կը փութամ յայտնել թէ նա յաջո-
ղեցաւ ուղղութիւն գրաւել հայ կանանց
կացութեան վրայ, ընկերական թէ ընտա-
նական շրջանակին մէջ. Բերալի ազգական
արհեստանոցն, ոյր բացումն այս շարժու-
թիւ տեղի ունեցաւ, ապացոյց մէկ առ այս:

Աւերջին տարւոց հայ վիպասաններու մէջ,
հարկ է որ յիշենք աստ Ապուլի որախօս եւ
արամիա հեղինակն: Արիւթեան ինչ որ է
իւր Օրոնս Կեանքի քոնիկներուն մէջ, չէ
նոյնն իւր նորավէպերուն մէջ: Իւր քոն-
իկներուն մէջ կը գտնենք զինք զուարթ,
բուհաճոյ, չարատես, խայթիչ եւ մերթ

անգութ իսկ, ի մի բան նկարագիր մը բա-
զադրեալ ու դժարորոշ. այլ իւր վէպերուն
մէջ պարզ է նա, բնական զգայուն, եւ գի-
տէ հրապուրել ընթերցողն ինչ դասի ալ
պատկանի:

Գրիգոր Զօհրապ ալ գրեց Անհրապա-
Սերանդ, վէպ հետաքրքրական, ուր իւր
աշխոյժ եւ կորովն ոճով կը պատկերէ ժա-
մանակակից իրողութիւններ ու դէմքեր:
Գրիգոր Զօհրապ, որ փաստաբան է, Մա-
սիսի մէջ հրատարակեց այդ վէպ, իրաւամբ
արհամարհելով սա նախապաշարուած թէ զը-
րական մարդու մը համարման կրնայ վնաս-
ել վէպ գրելն, նախապաշարուած որ մա-
նառանգ ի մե'զ այնքան հզօր է: Միթէ Պի-
քընսֆիլտի դիւանագիտական համաւերն
վնասած է իւր ականաւոր վիպասան մ'ըլ-
լան. ո՞չ ապաքէն վէպեր կը գրեն ժողով-
Լաչօ, Փրանսուցի նշանաւոր սփրազէտ ու
փաստաբան, Բիէն Լօզի, պաշտօնակալ
Փրանսական ծովային բանակին մէջ, եւ
այլ դիւանագէտք, օրէնագէտք, զինուորա-
կանք:

Ապաքէն այժմ յիշեցուցաւ վիպասանութեան
տեղի կու տան տակաւ առ տակաւ գրակա-
նութեան բոլոր միւս ճիւղերն, զի վէպն է
յարմարագոյն ձեւն ընկերական ուսումնա-
սիրութեանց համար: Գրագէտն, վէպին մէջ,
ազատ ասպարէզ կը գտնէ բնեւոր հոգեբա-
նական վիճակներն, պատկերելով կեանքն
ընկերական եւ կեանքն ընտանեկան, խօսե-
լու սիրոյ վրայ, ամուսնութեան վրայ, տուն
ու կնոջ, ծնողաց ու դասակաց յարաբերու-
թեանց վրայ: Վիպասանն պարզ բանաս-
տեղծի մը դեր չը վարեր. իւր քնահաճոյք-
ներն ի լոյս չը բերեր միայն, այլ կը խորա-
քննէ զգայնութիւնն ու կրքերն, որք յան-
հուն կը փոփոխին, կը քննադատէ, կը
վերլուծէ, կը պարզէ իրողութիւններ, խոր-
հուրդներ եւ հոգեկան յուզումներ: Այս
պատճառաւ ահա վիպական ձեւն կը դառ-
նայ նախամեծար ձեւն քաղաքակրթ աշ-
խարհին գրագիտաց: Հայոց մէջ վէպերու
ճաշակն նախ թարգմանութեամբ ներ-
մուծուեցաւ, եւ ապա եղան հեղինակներ
ալ որք մշակեցին ազգային վիպասանու-
թիւնն: Գծախատարար Տէր Սարգսեանի
Դանիէն է Սեպեան, որ գաւառական կեանքի
մէկ ճշգրիտ պատկերն ի հանդէս կ'ածէ,
մնաց կղզիացեալ եւ Հայաստանի ժողովրդ-
եան կենաց վրայ վէպի ձեւին ներքեւ նոր
ուսումնասիրութիւններ չը տեսանք. ցա-
ւալի է նաեւ որ Տօթեօս Երիւնդեան
(Տերեկեց) մի քանի պատմական ընտիր վէ-
պերու հրատարակութեան յետոյ կանգ ա-
ռաւ, եւ Մամուրեան ալ չը կրցաւ ա-
ւարտել Սեւ Լեւին Մարգը: Իսկ Պոլոյ
ժողովրդեան կեանքն կը շարունակուի ու-
սումնասիրութեան առարկայ լինիլ մեր վի-
պասաններու: Այդ ուղղութեամբ գրուած
վէպեր ապաքէն մեծագոյն օգուտ կը հայ-
թայթեն ժողովրդեան, քան եւրոպական
վէպեր, ոյց նկարագրած իրերն ու բար-
քերն չ'են համաձայն իւր սովորութեանց:
Անձնիւր միջավայր իւր մասնաւոր կեն-
ցաղն ունի: Ինչ օգուտ երբ վէպն, զոր
Հայն կ'ընթեռնու, մտնանիւ ընէ եւրո-
պական մոլութիւնքն ու մոլորութիւնքն.
հարկ է որ հայ ժողովրդեան ներկայաց-
ուին ու նշանակուին իւր իսկ նախապա-
շարունակներն, իւր իսկ բարոյական արտերն,
իւր իսկ ընկերական անիրաւութիւններն:
Եւ յետոյ, վէպերն կ'օգնեն պատմութեան,
ապագային կտակելով ներկայի ընտանեկան
վիճակն, ընկերական վիճակն, ժողովրդեան
ձկնումներն եւ բարքերն: Այս տեսակէտ-

ներով ահա գոհացուցիչ է տեսնել որ ազգային եւ տեղական վէպն կը մշակուի ի մեզ, եւ փափաքելի է որ Մամուրեան, Սյր-բուհի Տիւսար, Արմիրեան, Տէր Սարգսենց, Շիշմանեան, Զօհրապ եւ այլք, շարունակեն ի լոյս հանել նոր վէպեր։

Մեր անոնցմէ ենք, որ կը հաւատան յառաջագիւտութեան։ Ընդհանուր օրէնք մ'է այն անհատներու համար եւ ազգերու համար։ Հայ գրականութիւնն ալ, ոյր յառաջագիւտութեան արգելքներն չ'են թերեւ բացարձակօրէն անբառնալի, պիտի հնազանդի այս օրէնքին։

Մեր բոլորովին յուսահատ չենք հայ գրականութեան ապագայէն։

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՐՈՒԵՍՏԱՆՈՅԸ

«Ատենոք երիտասարդ մը ամուսնանալով կը բարեօրէն իւր տնտեսական վիճակն, ամուսնութիւնը խնայողութիւն մ'էր. այժմ ամուսնութիւնը չնայողութեան դուռ մ'է»։ Կրնանք ըսել թէ այս էր ամերիկացի շայն Ֆիլի խօսքերուն զոր արտասանեց Մայիս 5ին Բերայի իգական սեռի Արուեստանոցի բացման առթիւ։ Միշտ վսեմ, միշտ անկեղծ, միշտ հայելի, Խրիմեան Սրբազան ինչպէս ամէն ատեն նոյն եւ անցեալ կիրակի պարզապէս ճշմարտութիւնը խօսեցաւ։

Ժողովուրդը սրտանց սիրող երբեք կեղծաւոր չլինի, եւ որքան ալ դառն լինի ճշմարտութիւնը, պարզապէս կ'ըսէ։ Ո՛չ ապաքէն մեր ընտանեկան վիճակը կը վատթարանայ օր ըստ օրէ, վասն զի Պոլսոյ հայ կիներ չապլէ, ունայնաէր է եւ ծոյլ եւ ծուլութիւնը Հայոց համար սիրելի ախտ մը սկսած է լինիլ եւ մեր յետադիմութեան գլխաւոր պատճառը ծուլութիւնն է։ Մօտ կէս ժամ խօսեցաւ Հայրիկ, եւ եթէ պախարակեց — ո՛րքան իրաւամբ — Պոլսոյ հայ կանանց ծուլութիւնը, միտքարեց ժողովուրդն յիշեցնելով գաւառացի Հայոց աշխատասիրութիւնը։ Բայց այդ միտքարութիւնն ալ կատարեալ չէր։ Հայրիկ որ լաւ կը ճանաչէ Հայաստանը, միայն Քարբերդն օրինակ բերաւ։ Քարբերդցի պանդուխտ չկայ վասն զի նոքա անխտիր կ'աշխատին չարաչար։ Եւ եթէ միւս գաւառներն օրինակ չբերաւ Հայրիկ, պատճառն այն է որ նոքա մեծ իրաւունք չունին օրինակ հանդիսանալու։ Ամէն անգամ որ Հայրիկ խօսի, ուշադիր մտիկ ընողի համար խորին մտածութեանց նիւթ կայ նորա խօսքերուն մէջ։ Այս անգամ Հայրիկ ոչ միայն մտքերն համոզեց ու սրտերը շարժեց, այլ եւ նուրբ հեղինոջ մը հանդիսացաւ։ Մտաւարտութիւնը որք բուռն սպաւորութեան արդիւնք էին, կ'ընդհատէին Հայրիկին խօսքերը։

Հայրիկ յաջորդած էր Պ. Գրիգոր Նիկողոսեանի՝ որ բաւական խօսեցաւ, այն կողմի, պողպատեայ ոճովն որ ազատ, վայրագ լեռներու դրոշմը կը կրէ։ Մեր յատուկ խնդրանքը Պ. Նիկողոսեան իւր խօսածներն ի գիր առնելով մեզ տուաւ ի հրատարակութիւն. ընական է որ այդ գրութիւնն ճիշդ արտասանածը չըլլայ, բայց ոգին, իմաստներն անփոփոխ են։ Պ. Նիկողոսեան այդ օրը կը նմանէր արծուի մը որոյ թեւերէն ծանր կապարներ կախուած չէին թողուր թռիչ առնուլ։ Բայց եւ այնպէս որ-

պիսի՝ խորին ուշադրութիւն նորա ամէն մէկ բառերուն որոյ ոչ մին մեռած բառ մ'էր. ամէն մէկ բառ զնդակի մը պէս սրտի կամ մտքի կը զարնէր ուղղակի։

Պ. Նիկողոսեանի խօսքերը շատ վրդովում պատճառեցին գուցէ գլխաւորաբար այն պատճառաւ որ տառնաբանէն առաջ Նուրեան էֆէնտի խօսած էր։ Ի հարկէ Նուրեան էֆէնտի իւր կրկին պաշտօնական դիրքովն ամենակատարեալ կերպով հանդարտ եւ պաշտօնական պիտի լինէր։ Նորա աստիճանութիւնը պարզ, յստակ կերպով գրուած, ամենախորին ուշադրութեամբ լսուեցաւ եւ ամենաջերմ համակրանք ընդունուեցաւ։ Ամէն անգամ որ օգտակար դործ մը առանց ծամածուռ ճանապարհներու կը պարզուի ժողովրդեան առաջ, գոհունակութիւնը մեծ կը լինի։ Եթէ Պատրիարքարանի եւ Ազգ. Ժողովոյ շուրջը շատ հաշտ չենք Նուրեան էֆէնտի, բայց Բերայի Թաղական Խորհրդարանի բոլորովին ամենուրեք անկերեւ ապացոյցներ կը տեսնենք իրեն բարեկամ լինելու։ Եթէ Նուրեան էֆէնտի միայն եւ միայն տնտեսական կերպով ազգին ծառայել ուզէ, չենք կարծեր որ իրմէն աւելի օգտակար անձ մը գտնուի ազգին մէջ այն մասին եւ ո՛չ որ կարենայ իրմէն աւելի սիրելի լինիլ։ Բոլոր հանդիսակներ, ինչպէս նաեւ անոնց հետ ազգը շնորհակալ կը մնայ Նուրեան էֆէնտի եւ իւր պաշտօնակցաց։ Իցիւ թէ միշտ այսպէս նիւթերու վրայ գրելու առիթներ ներկայանան մեզ։

Արուեստանոցի սրահն իւր քովի սենեակներովն առայժմ կը բաւէ աշակերտակեաց համար՝ որոց տնօրինութիւնն յանձնուած է Ալեքսանդր Խիկին Գայրանէ Մատակեանի։

Ա. Ա.

Աւասիկ Պ. Նիկողոսեանի ամենաբանութիւնը.

ՀԱՅՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏՔ

Յարգելի Հանդիսականներ

Ատենապետ էֆէնդէի յետ ես կ'ենեմ ատենախօսել ձեզ, չ'լինելով մինչդեռ ո՛չ խնամակալութեան անդամ եւ ո՛չ մի բանի մասնակից, այլ սոսկ մի հրաւիրեալ։ Բայց երբ կանանց արհեստների եւ արհեստանոցների մասին ամբողջ տասը տարի եմ խօսել եւ այնչափ բուռն հակառակութեան հանդիպել, անպատեհ չի լինիլ կարծեմ որ մի քանի խօսք էլ ես առեմ, տեսնելով այս օր այնչափ բազմանաց մի իրագործումը։

Արհեստանոցի բացման վրայ, ինչպէս գիտէք, երկու տեսակէտով կարելի է նայել. նպատակի եւ սկզբունքի։ Նպատակի իրագործումը կ'վերաբերի Պերային, կամ ասենք հէնց ամբողջ Պոլսին, իսկ սկզբունքի ընդհանրացումը համայն հայ ազգին, որի շահերը հարկաւ շա՛տ աւելի բարձր են եւ նուիրական, քան թէ մի քաղաքի կամ գաղութականութեան, ո՛րչափ էլ նա մեծ լինի։ Խօսելով ուրեմն նախ Պերայի արհեստանոցի մասին, մի քանի խօսք էլ ասենք նորա համար թէ ո՛րչափ մեծ է եւ փրկարար արհեստանոցների պէտքը գաւառների մէջ եւս, ուր ապրում է ազգի մեծամասնութիւնը։

Օտար մարդոց համար հեռու տեղից չգիտէք թէ ո՛րչափ մեծ է Կ. Պոլսի անուշը. հայաչէն պալատներ, չքեղ քջօղիք, փառաւոր եպրններ, ճոխ բնութիւն, փա-

շուկ ժողովուրդ, որն իր սիրած ձօլիսը գրախտի հետ էլ չի փոխիլ։ Կ'մտնես Բօսֆօրից ներս, առաջին հայուածքով, այո՛, նոյն սպաւորութիւնն է։ Ներս ու աւելի ներս կ'գաս, ուրիշ բան. կ'սկսես ապրիլ եւ ուսումնասիրել, ո՛, ինչ պատրանք...

Մինչդեռ այսպէս չէ եղած ժողովրդի վիճակը մի որ եւ է կէս դար առաջ. հայ ամիրաների սպաւորները, հայ էսնաֆների տան սարգ ու կարգը, հայ կանանց ճոխութիւնները, հայերի ընդհանուր բարեկեցութիւնը — այս ամենի նկարագիրը ընդիմադր կարծում է թէ առասպելական աշխարհից մէկը իր առաջ Հաղար ու մին գիւղերի կախարդալից էջերն է կարգում։ Ո՛ր գնաց այդ վառքը, ի՞նչ եղաւ այդ հարստութիւնը, ո՛ր եւ այն սպաւորները, ուրոնց աւերակաց վրայ հիմայ բուերի լացն է միայն լսվում. ո՞վ կործանեց այդ ամենը։ Ամենամեծ եւ վերջին մահացու հարուածը մեզ տուաւ, յարգելի հանդիսականներ, եւրոպական ճարտարարուեստը, էնթուսիզմը, որի հետ Հայոց արհեստները չ'կարողանալով մրցիլ, մէկ հարուածով ընկճվեց ու ջարդվեց այն ուժը, որով Հայոց ոյէս մի փոքր ժողովուրդ կարողանում էր ամբողջ դարեր հազցնել եւ զարդարել բազմամիլիոն մի հզօր պետութիւն։ Այդ օրից էր որ հայ կինը մնաց անգործ, հայ տղամարդը առանց աշխատելու, հայ ընտանիքը առանց ապահովութեան։ Այդ օրից էր որ Պոլսի հայոց մեծամասնութիւնը հասաւ այն օրհասական վիճակին, որի մէջ դեռ տառապում է նա այնոյս։

Բայց գիտէք, յարգելի հանդիսականներ, որ ամեն մի անհատի եւ ժողովրդի մեծութիւնը նորա անկման մէջ կարելի է միայն տեսնել. իսկ թէ ո՛րչափ վեհ է, ամօթխած եւ պատուազգած հայը, կ'տեսնուի նորանով, որ Կ. Պոլսի Հայոց հասարակ դասակարգը ո՛րչափ էլ աւելի դժնդակ եւ վատթար կացութիւն ունենայ քան թէ յոյները եւ այլք, նորէն տեսէք թէ ո՛րչափ քիչ մուրացկաններ կը պատահէր դուք հայերից։ Դեռ անցեալ օր էր, որ մթնադէմին տեսայ մի հայ կին յունարէն մուրալիս. երբ մօտեցայ, հայերէն խօսեցի, նա հայերէն չ'իմացող ձեւացաւ, բայց վերջը մեծ դժուարութեամբ արտասանեց. «Ես հայ եմ, բայց կ'ամաչեմ հայերէն մուրալու...»։ Այո՛, հայ կինը աւելի դիւրութեամբ կ'լինի լեզուի, դուք էւ... կ'ըսնի ուրացող, բայց ո՛չ մուրացող...։

Ահա այս նեղ ու տաժանելի վիճակի մէջ կ'ապրի հայ ժողովրդի մի ստուար մասը մայրաքաղաքում. ահա՛ թէ ինչ ծանր ճգնաժամի մէջ կ'բացուի այս արհեստանոցի Պերայի իգական սեռի համար։ Նուրեան էֆէնդէի եւ նորա համախոհների անսպաւելի եռանդն եւ հաստատամտութիւնը կատարեալ երաշխաւորութիւն լինելով արհեստանոցի նպատակի յաջողութեան, ուրիշ բան չ'ի պիտի լինի նա Պերայի Հայոց համար ապա թէ ո՛չ մի մեծ բարեգործական հաստատութիւն, բառի ամենալուծում իմաստով։ Ուստի աւելի քան բաղձալի է որ նոյն տեսակ արհեստանոցներ նմանապէս Պոլսի բոլոր հայաբնակ թաղերում, որոնց պէտքերը նուազ ստիպողական չեն, քան Պերա-

ցոյց։ Բայց, ո՛րչափ էլ պատկառելի լինի Հայոց թիւը Կ. Պոլսի մէջ, որչափ էլ կարեւոր լինի նոցա պահպանումը եւ ապահովումը ազգի համար, դարձեալ հայրենիքի մէջ ապրող հայ ժողովրդի վերաբերմամբ Պոլսի հե-

ոռու ու անջատ մի գաղթականութիւն է, որը, եթէ չառնենք ընկնի, կարող է եւ կորչիլ ինչպէս որ կորան Նահատանի, Աղ- ուստիստանի ու Հնդկաստանի հայերը: Դինչդեռ հայրենիքի մէջ ապրող ժողովրդի նկատմամբ ո՛ր եւ է այդ պիտի մտածում անհնարին է ունենալ . . . Սորա համար է հէնց որ Պօլսի վրա հասած տնտեսական վտանգը այսչափ դառն փորձերով տեսնե- լուց յետ, պարտաւոր ենք որ առաջ մտա- ծելու թէ ի՞նչ միջոցներ պիտի ձեռք առ- նենք մի եւ նոյն տնտեսական պատուհասից հայրենիքը փրկելու համար, երբ այսօր-վաղը այդ պատուհասը երկաթ ուղով պիտի սլանայ Փոքր Ասիայի Այս, պարսիկներ, Եւրոպացիք ու եւրոպական ճարտարարուեստը երկաթ ուղի նստած Հայաստան պիտի գաղթեն ու ան- պարտաւոր հայ ժողովրդի համար չա՛տ աւելի կործանիչ ու կորստաբեր պիտի լինին քան թէ եղած են թէ՛ յամբարձնիչի աւերիչ հրոսակները . . . Հնդկերի պէս գաղթածը պիտի լինի մէկ հար- ուածով են սպանած, մինչդեռ Եւրոպայի տնտեսական հոսանքը հետզհետէ ու տան- ջելով պիտի հանէ մեր հողին: Դորա համար մինչ այդ թշնամին դեռ մեզ չէ մտեցած ձեռնամերձ պատերազմի, մտա- ծենք թէ ի՞նչ զենքերով պիտի կարողա- նանք նորա հետ կռուիլ: Եւտով, ո՛ր չու- տով մտածենք դորա վրայ, որ յանկարծ ո՛ր եւ է չորս տասնեակ տարուայ մէջ չ'իսխա- տի այն գոյութիւնը, որի չորս հազար տարուայ պահպանումը այսչափ պարծան- քով ենք հռչակում համայն աշխարհին . . .

Բայց ունենք միջոց . ունենք զենքեր . որոնք են դժբա՛ր Գա՛ր երկրագործութեան եւ արհեստների մէջ ունեցած մեր ազգա- յին բացառիկ ձիրքերն են, որոնց փաստա- բանութեան տեղիք չ'կայ այս տեղ, երբ բացայայտ է դա ամենքի համար, երբ Վլա- դիմիր Մոնոմախից սկսած մինչեւ Պետրոս Մեծն եւ յետոյ, հայերն են եղած այժմեան հսկայ Ռուսաստանի մէջ արհեստի եւ ար- ուեստի գլխաւոր վարպետները ու կարա- պետները, ինչպէս որ իրանք ուսուցիտա- կանները կ'վկայեն այդ հնազանդական ժո- ղովի մէջ: Հապա Հնդկաստան, հապա Լե- բոպա՛, ո՛վ մտածած է ցուցակագրելու այդ կողմերը Հայոց տարածած արհեստները, որոնց թոււմ գէթ յիշենք որ աշխարհա- տաբնութեան արհեստը Եւրոպայի մէջ սովորա- ցնողը առաջին անգամ Ամստերդամի հայերը եղան, (որոնց արհեստական ձիրքերից ներ- չընչուած գուցէ Ժան-Ժաք Ռուսոն հաճոյք կ'զգար, երբ հայկական հագուստով կ'բաշխէ իր պատկերը նկարիչները . . .)

Եւ ինչո՞ւ հեռու երթանք հայ արհես- տագէտների յիշատակներն չեն մայրաքա- ղաքին այն հոյակապ պալատները, քէօքե- րը եւ ձմերանոցները, որոնք մարդկային հանճարի փառաբանութեան համար Վան- դուեան կոթողից բնաւ պակաս արժաններ չեն . . .

Այսպէ՛ս, հայերը թէ անհատապէս եւ թէ հաւաքապէս միշտ ցոյց են տուած արհեստների մէջ իրանց ունեցած նշանա-ւոր ձիրքերը, որոնցով նոքա իրաւամբ կարող էին եւ կարող են պարծենալ, թէ- պէտ երբէք չեն պարծեցած: Այս օր եւ հէնց չենք տեսնում ինչպէս սուրբով կը խայտան Բոսֆորի վրայ Յովսէփ էֆ. Գա- ֆաֆեանի շինած գեղեցիկ նաւերը, ինչպէս եւ հեռաւոր անգղաց գինեգործական նաւագա- բանների մէջ կ'հնչեն դեռ Սամաթիացի Զիլինների ցնծողները:

Հապա ուրեմն, երբ տէ՛ր ենք այս ըն- գունակութեանց, երբ Եւրոպան արհեստ-

ներով եւ արուեստներով պիտի ջանայ մեզ խեղդելու, միթէ ժամանակ չէ՞ որ առաջ ուշադիր լինելու մեր ունեցած գիւղատն- տեսական եւ արհեստական արդիւնաբե- րութեանց ուսումնասիրութեան, որով կա- րող լինէինք բարեօրէն եւ բարձրացնել բուն ժողովրդական էֆէկտայէն, որպէս զի մօտա-ւոր ժամանակի մէջ ընդհարուելով եւրո- պական ճարտարարուեստի հետ, չ'խորտակ- ուի իսպառ, այլ առ ժամանակս դիմադրե- լով, կարող լինի աստիճանաբար զարգանալ եւ յաջողութեամբ մրցիլ: Երբ հրացանի խողովակը հաստատուն պահուած է, զըժ- ուար չէ բնաւ նորան բողբոջարուածեան չ'ինելու: Երբ ծառի արմատները եւ բունը առողջ են, զժուար չէ բնաւ նոր պա- տուաստներ անել նորա վրայ: այդպէս եւ կարող ենք եւրոպական արհեստները եւ արուեստները մեր արուեստից պատուա- տել, եթէ միայն վաղօրոք ուսումնասիրենք պատուաստի եղանակը եւ միջոցները, երբ մասնագէտների ձեռքով ցուցակագրենք մեր պահած արհեստները եւ արուեստները ու կատարեալ գիտակցութիւն ստանանք թէ ի՞նչ ունենք, ի՞նչ է մեզ պակաս եւ ի՞նչ կարող ենք անել: Իսկ այս կարեւոր պարտ- քը կատարելու համար ամենքս համբաւ- խաբար պիտի միացնենք մեր ոյժերը, ե՛ւ արանց ընկերութիւնները, ե՛ւ կանանց, ե՛ւ մամուլը: Հէրիք է Բուլանժիկի ու Ենէրէյի վրայ գրելը, հերիք է վերացական նիւթերի վրայ բռնա՛նք յորինելը: հրդեհը մօտ է, հե- ղեղը արդէն լեռան գլխին է: չ'ուարենք, չ'կորուսանենք զիրենքս, բարոյական ոյժ ու արիւթիւն ունենանք: արի մարդիկ հրաշք- ներ կը գործեն: մի Գամբիթայ երկու միլիոն թշնամի էր կասեցնէ: մի Վարդան Մամիկոնեան տասնապատիկ գունդ էր կը ջախջախէ: մի Սուլթան Բայազիդ Լէնկ- թէյմուրի ահեղ բանակներ կը խորտակէ . . .

ՂԱՐԱԲԱՂԻ (9)

ԱՍՏՂԱԳԵՏԸ

ԺԴ.

ՓՈՆԱՀ ԽԱՆԻ ԳԱԼՈՒՍԸ

Վարանդայի մելիքն ուրախութեամբ դիմաւորեց Փանահ խանը: Բարեկամական խոստումներն երկու կողմէն կը թափուէին զեափ նման Չանախչին դարձած էր խըն- ճողներու մի մեծ գահլիճ: բոլոր դէմքերու վրայ ուրախութիւն կար: Բայց Փանահ խան չէր կրնար մոռնալ իւր ներքին խորհուրդ: ներս եւ յարմար առիթը ներկայացաւ խո- սակցելու մելիքին հետ: Վարանդայի մելի- քը տեղեկութիւն ստանալով որ թալիշի մե- լիքը դաշնակցելով Սամալայի միւս մելիքնե- րու հետ պիտի գործէր մի նոր եւ աւելի զօրաւոր յարձակում մը, անհրաժեշտ համա- րեց խորհրդակցիլ Փանահ խանի հետ եւ մտածել պաշտպանողական միջոցներու վը- րայ: Փանահ խան ուզեց օգնու թալիշ ա- ռիթէն եւ իրողորդել ինչ հին բաղձանքը:

—Մելիք, ըսաւ, թշնամիները զօրաւոր են, պէտք է սկիզբէն ապահով եւ պատրաստ լինիլ յարձակմանց դէմ, եւ սակայն ձեր Չանախչի բերդը պաշտպանուելու խիստ անյարմար դիրք մ'ունի: Պէտք է որոնել մի աւելի ամուր դիրք որոյ վրայ բերդ հիմ- նելով այնուհետեւ բոլորովին ապահովուած

կը լինիք: Ասկէ զատ պէտք է որ ձեզմէ բաւականութիւն պահանջեմ այն սաստիկ թշնամանաց համար զոր ինձ հասոյց ձեր եղբորորդին:

—Ի՞նչպէս, նա համարձակեցա՞ւ վիրաւո- րել զձեզ:

—Խիստ ծանր կերպով, ըսաւ Փանահ խան, ծիծաղելով: նա փախցուց իմ կինը:

—Ձեր կինը. բայց . . .

—Նորա այժմեան կինն իմ կինն էր. . .

—Ձեմ հասկնա՞ր . . .

—Շատ դժուարին չէ, պատասխանեց խանն եւ սկսաւ մանրամասնաբար պատմել բոլոր անցքը:

Յետոյ աւելցուց.

—Դուք, կարծեմ, մելիք, կը համաձայ- նիք ինձ հետ ընդունելու որ ձեր եղբոր որդին մեղանշած է հիւրասիրութեան սրբ- բութեան դէմ: Բայց մի՛ բարկանա՞ք: մա- նանք անցեալն եւ որպէս ճշմարիտ բարե- կամներ աշխատինք որոնել հնարն համա- ձայնեցնելու մեր փոխադարձ շահերն այն վարձատրութեան հետ զոր դուք ինձ պարտաւոր էք: Այն տեղն՝ որոյ վրայ էս ա- աջարկեցի բերդ հիմնել, ձեզ կը պատկա- նի, ինձ տուէք զայն: Նորա վրայ կը կա- ուցանեմ մի բերդ եւ այդ բերդը կը ծա- տայէ իբրեւ պաշտպանողական ապահով ամրութիւն մեր երկուքի մէջ: Որովհետեւ էս յոյս ունիմ, գոնէ իմ կողմանէ, որ մեր բարեկամութիւնը մշտապէս կը շարունակ- ուի եւ Վարանդայիները Ջուանչիրցիներու հետ կը կազմեն մի ժողովուրդ:

Մելիքը չհասկնալով Փանահ խանի խո- րամանկ նպատակներն որ ծածկուած էին Փանահ խանի այդ փառաբանական խօսքերու մէջ, ուրախութեամբ ընդունեց նորա ա- աջարկութիւնը, մանաւանդ որ այնպիսի վիճակի մէջ ուրիշ ճար չունէր: Որոշեցին միւս օրը գնալ տեսնելու այն տեղ՝ որոյ վրայ բերդը պիտի կառուցանէին:

ԺԵ.

ՍԱԼԻՀԱՆ ԿՐԿԻՆ ԵՎ ՅԱՓԵՏԱԿՈՒԻ

Մթին գիշերը տարածած էր խաւարը Ղարաբաղի վրայ: Ոչ մի ստող կը փայլէր յերկինս: օդը թարձր էր եւ ծանր: ամէն ինչ կը նախագուշակէր փոթորիկի մերձաւո- րութիւնը: փոթորիկն ամառնային եղա- նակներու մէջ ոչ սակաւ անգամ կը պատա- հի Ղարաբաղի հովիտներու մէջ:

Սալիհան միայնակ էր իւր սենեակին որ կը գտնուէր Չանախչի ամրոցին հիւսիսային աշտարակի ամենաբարձր յարկին վրայ: Այդ միջոցին Ջուամուգ իւր հօրեղբոր մօտ էր Փանահ խանի հետ խորհրդակցելու, եւ Սալիհան կ'սպասէր նմա յանկարծ լսեց նա յստակ կերպով սա խօսքերը. «Աշտարակի պատուհանէն կ'սկսեցէք մի պարան. ձեզ պիտի տրուին այնպիսի տեղեկութիւններ ոյք ձեզ համար խիստ հարկաւոր են: նա վախցաւ, բայց մի եւ նոյն ձայնն երկրորդ եւ երրորդ անգամ արտասանեց մի եւ նոյն խօսքերն, յետոյ աւելցուց. «Մի՛ վախնաք եւ շտապեցէ՛ք, եթէ դուք չ'կատարէք յե- քաշէ՛ք պահանջն, յետոյ պիտի զղջաք . . . բայց ուշ կըլ նի այն ատեն . . . գործը կը վերաբերի Ջուանչուղի կենաց ապահովու- թեան:»

—Ջուամուգ . . . Աստուած իմ, բա- ցագանչեց Սալիհան, այս բոլորիս, այս բո- պէիս, եւ առնլով առաջին պատահած պարանք պատուհանէն վար կ'սկսեց եւ քիչ յետոյ վեր քաշեց: պարանին ծայրը թուղթ

մը կապուած էր քարի հետ, Սալիհան չուտով կարգաց հետեւեալը:

«Մի մարդ որ ջերմ կարեկցութիւն ունի ձեր բախտաւորութեան համար, կը յայտնէ ձեզ որ մի նշանաւոր դժբախտութիւն կ'սպառնայ Ձուսնուդին, որ չէ կարող ազատիլ եթէ դուք չփութաք զնա փրկել: Նոյն իսկ այս րոպէիս պէտք է գաղտնի կերպով գաք այն ծառի մօտ որ կը գտնուի ճանապարհի ծախ կողմն: այն տեղ պիտի ստանաք մի յուսուած որ կարող է փրկանդէ պահպանել ձեր ամուսինը: Բայց այդ մասին պէտք է գաղտնի պահէք: Երտապեցէ՛ք, եթէ ձեզ համար թանկագին է Ձուսնուդի կեանքը, շատ չեն ուշացներ զձեզ: ո՛չ որի ցոյց տուէք այդ թուղթն, ոչնչացուցէք զայն եւ գաղտնիքը ծածուկ պահեցէք որովհետեւ ամէն ինչ աղկէ կախուած է:»

Սալիհան շտապեց երկիւղի մէջ ինկաւ:

—Աստուած իմ, դարձեալ բացողանջեց նա, իմ սիրելի Ձուսնուդը փրկելի մէջ է, կը վազեմ ազատելու զնա: Բայց ի՞նչ պէ՛տք: Առանց մեղքի հրամանին պահապանն ինձ թոյլ չտար ամրոցէն դուրս ելնելու: Իսկ ինձմէ կը պահանջեն գաղտնիք պահել: Երտապեցէ՛ք, եթէ ձեզ համար թանկագին է Ձուսնուդի կեանքը, շատ չեն ուշացներ զձեզ: ո՛չ որի ցոյց տուէք այդ թուղթն, ոչնչացուցէք զայն եւ գաղտնիքը ծածուկ պահեցէք որովհետեւ ամէն ինչ աղկէ կախուած է:»

Մեր դիւցազնուհին չուտով փութեց հագուստն եւ վազեց դէպ ի շարժական կամուրջը:

—Փո՛ղ տուր, չուտով, գոչեց նա պահապանին, մեղքն ուղարկեց զիս գետէն ջուր բերելու: Պահապանն իջեցուց շարժական կամուրջն եւ Սալիհան նետի նման սլացաւ դէպ ի նշանակուած ծառ: Բայց այն ինչ հասաւ արեւոյ՝ իսկայն մի քանի հոգի չըջապատեցին զինքը, կապեցին բերանը թաշկինակով, թեւերը կաշկանդեցին պարանոց եւ յափշտակելով զայն արագութեամբ անհետացան:

Երբ Ձուսնուդ բաժնուելով Փանահ խանէն վազեց ամրոցին այն կողմն ուր կը գտնուէր կինն, որպիսի՝ սարսափ տիրեց սրտին եւր մտնելով իւր բնակարանը չզրտու զնա: Էրիկմարդու հագուստն զոր Սալիհա հագած էր ճանապարհորդութեան ժամանակ, այն եւս անհետացած էր: Հասկըցաւ . . . ուրեմն գնաց նա . . . թողուց զինքն . . . նա՛ զոր այնքան կը սիրէր: Բայց անկարելի բան էր . . . պէտք էր մի գաղտնիք ըլլար . . . մի նշանաւոր կորստարեք գաղտնիք ծածկուած լինելու էր: Սյուպէս կը մտածէր Ձուսնուդ եւ խեղճարի նման կը վազէր դէպ ի շարժական կամուրջը: Պահապանէն ստացած տեղեկութիւններէն ստուգեց նա իրեն հասած դժբախտութիւնն: Բացուցեց որ Սալիհան առանց մէկէն բռնող ատուելու՝ ինքնակամ դուրս ելած էր ամրոցէն: Սիրտը կտոր կտոր եղաւ: Կ'ուզէր վազել նորա ետեւէն, իմանալ մի այդպիսի անսովոր վարմանը պատճառը: Վազեց հորեղբոր մօտ. մեղքը տեսնելով զնա անհանգիստ կերպով ոտքի ելաւ: Երիտասարդի մեայլ դէմքը, վրդովուած աչքերը ցոյց կուտային որ սարսափելի դէպք մը պատահած է:

—Ի՞նչ է պատահած, ի՞նչ է պատահած . . . գոչեց մեղքը, գողալով ամբողջ մարմնով, ի սէր Աստուծոյ, ըսէ՛, ի՞նչ է պատահած քեզ:

—Հորեղբայր, շտապեցէ՛ք . . . քնանք, քնանք . . .

—Ո՛ր, ինչո՞ւ համար . . .

—Կորած եմ, կը մեռնիմ, ա՛խ մի տանջէք զիս, քնանք . . . կարելի է գետ ժամանակ կ'ուսնենանք ետեւէն հասնելու: Այսպէս խօսելով նա կը բաշխէր կէս հագուած մեղքը:

—Եթեքի եկուր, Ձուսնուդ, ի՞նչ կ'ուզես, ուր երթանք, զո՞վ որոնենք, ի՞նչ եղար:

—Սալիհա՛ս, Սալիհա՛ս, Էրիկմարդու հագուստով հեռացաւ ամրոցէն: Նա գնաց, Աստուած գիտէ թէ ո՛ր տեղ եւ ինչո՞ւ: Երկար խօսեցաւ, ա՛խ ըսաւ, ամէն բան կը հակառակ ինձ, ես կ'երթամ բնութեան հակառակ, որ դատաւարտած է զիս մշտական տանջանքի . . .

Արտասանելով այդ խօսքերը, նա խլեց խնջարն եւ շտապեց դարձնել այդ մահացու զէնքը դէպ ի յինքն, բայց մեղքը բռնեց նորա ձեռքն որ պատրաստ էր անձնասպանութիւն գործելու:

—Ի՞նչ կ'ընես, անխել, աղաւաղեց մեղքն, եթէ Սալիհան թողուց զքեզ, ուրեմն կ'արժէ որ նորա համար անձնասպան լինիս, իսկ եթէ յափշտակեցին զնա, շատ ուշ է այժմ նորա ետեւէն երթալ: Գիտե՛ս թէ արդ եօր ո՛ր կողմ փախած է, կը կասկածիմ մէկուն վրայ: Եթեքի՛ եկ, Ձուսնուդ, արիագիր եւ համբերող եղիր: մենք յետոյ կ'աշխատինք ամեն միջոցներ ձեռք առնուլ Սալիհայիդ ազատութեան համար: միթէ նա յափշտակուած է միայն:

—Ա՛խ, եթէ միայն յափշտակուած լինէր, բացագանչեց Ձուսնուդ, այն ժամանակ ես կը նետուէի նորա ետեւէն մինչեւ աշխարհի վերջին ծայրը, մինչեւ մեծ ծովի յատակը: Բայց աւա՛ղ, նա յափշտակուած չէ, նա ինքնայօժար կերպով թողուց զիս: Ի՞նչպէ՛ս անբախտ եմ ես: Բայց չիմի թէ Փանահ խանն յանդգնի հրապուրել զնա: Ո՛չ, ո՛չ, այդ անկարելի է, այդ աներեւակայելի է: Տէ՛ր Աստուած, նա իւր յօժարութեամբ թողուց զիս, նա արհամարեց իմ սէրը: Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած, ո՛րքան անբախտ եմ ես:

Ի զուր մեղքն ի զորմ կը դէնք ամէն միջոցներ հանգստացնելու համար Ձուսնուդն, ի զուր կը վառնէր իւր բոլոր սիրած խօսութիւնն զնա համոզելու: Յուսահատ երիտասարդը կը փետուէր գլխին մազերն եւ ցոյց կուտար խեղճարութեան նշաններ: Ամրոցի մէջ մեծ յուզում կը տիրէր այդ անցքի պատճառաւ: Մեղքն՝ որպէս զի փոքր ինչ հանգստացնէ իւր եղբորորդին, զիտմամբ ուղարկեց զանազան կողմեր զինեալ մարդիկ, որպէս զի եթէ կարելի էր գտնէին փախստականներու հետքերն, բայց նոցա բոլոր հետախուզութիւններն ապարդիւն անցան: Գիշերային խաւարն անթափանցիկ քողով ծածկւած էր այդ անցքն: Ամրոցը զիշերն ոչ մի մարդ ամրոցի մէջ պառկած էր քնանալու, ամէն որ վրդովուած էր եւ կ'ողորար որ Ձուսնուդի պատահեցաւ մի այդպիսի անցք: Մինչեւ իսկ Փանահ խան մոռցաւ այն վիրաւորանքն զոր իրեն պատճառած էր Սալիհայի ամուսինը: Նա եւս միւսներու նման կը ցաւակցէր երիտասարդի վիճակին:

Սյուպէս տխրութեան եւ խռովութեան մէջ անցաւ Չանախի բերդի մէջ այն գիշերն որոյ առաւօտուն պէտք էր հիմը ձգուէր անմատչելի Եուզիի բերդին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ

Նախարարապետ Պ. Կոպլէ Հալլի ծովային արուեստահանդիսին մէջ արտասանած է ճառ մը որ լաւ ազդեցութիւն բրած է ի Ֆրանսա: Այդ ճառն երկու գլխաւոր մասանց կը բաժնուի. առաջին մասը կը վերաբերի Ֆրանսայի արտաքին քաղաքականութեան, իսկ երկրորդ մասն՝ երկրագոյցին:

Պ. Կոպլէ, խօսելով արտաքին քաղաքականութեան վրայ, կը յայտարարէ թէ՛ կառավարութիւնը միշտ կը պահէ խաղաղասիրական պաշտպանողական դիրք մը: սակայն եթէ արտաքին յարձակում մը տեղի ունենայ, Ֆրանսա պատրաստ է ամէն զոհողութեանց: Պ. Կոպլէ ճարտար բայց միտնգամայն Ֆրանսայի արժանապատուութիւնը պահպանող ոճով մը կը խօսի: Աւստրիական լրագիրք իրենց գոհունակութիւնն յայտնելով այդ ճառի մասին, կը յայտարարեն թէ Պ. Կոպլէի խաղաղասիրական ամէն մէկ պարբերութեան կը յաջորդէ սպառնալից պարբերութիւն մը:

Իսկ Ֆրանսայի երկտացոյցին համար Պ. Կոպլէ կ'ըսէ թէ՛ ներքին չէ անդադար փոխառութիւն ընել բացը գոցելու համար, վասն զի վերջապէս պիտի հասնի ժամանակ մը որ հարկ պիտի լինի վճարել այդ փոխառութիւնները: Ինչո՞ւ չընենք ալ բաւական չեն, հետեւաբար տուրքերու վրայ նոր յաւելումներ անհրաժեշտ են: Թէպէտե՛ս միշտ սարսափ կ'ազդէ զուրքերու վրայ յաւելումն բացառութիւնը, սակայն Ֆրանսայի թերթերը գոհ են որ նախարարապետն առանց ծամածուռ ճանապարհներու պարզ կերպով կը յայտարարէ արոց յաւելման հարկը:

—Ֆրանսայի պատերազմական նախարարութիւնն որոշած է զօրաբանակներէն մին շարժուն վիճակի մէջ դնել հոկտեմբերին: փորձ մ'է այս տեսնելու թէ արդեօք ամէն պատրաստութիւնը լա՞ւ են եւ թէ պատերազմի մը մ'ընցին զօրաբանակ մը շարժուն վիճակի վերածելու համար ի՞նչ դժուարութիւնը կրնան ծագիլ: Բայց որոշուած չէ թէ ո՛ր զօրաբանակին վիճակուած է շարժուն լինիլ: վերջին պահուն պիտի որոշուի: հետեւաբար բոլոր զօրաբանակները միշտ կազմ եւ պատրաստ պիտի գտնուին: Գերմանացիք թէպէտեւ ոչինչ կրնան ըսել ընդդէմ այս կարգադրութեանց, սակայն կը կասկածին թէ այսպիսի պատրուակի մը ներքեւ բոլոր զօրաբանակները՝ պատրաստութիւն եւ յանկարծ պատերազմն սկսի: հետեւաբար իրենք ալ Մէձի եւ Սլոնցուրկի շրջակայքն իրենց զօրքերը կ'աւելցնեն:

—Բարիդի թաղապետութեան ընտրութիւնը Ֆրանսայի համար գրեթէ քաղաքական դէպք մը կը համարուի: Մայիս 3ին (եւրոպական) նոր ընտրութիւնը կատարուելով ընտրուած են 32 արմատականը ոչ բարիդի վարչական ինքնօրինութեան կողմնակից են, 3 ընկերվարականը, 3 հանրապետականը, 10 պահպանողականը, իսկ 30 ընտրութիւնը մնացած են համեմատականի:

ԱՌՏՐԻԱ

Համալսարանը կը գործեն Աւստրիայ մէջ: հետամուտ են Օրէնստոն (յունադա-

տն) եկեղեցւոյ դարձնել Աւստրիոյ սլաւ-
ները. Պոհմիոյ մէջ Օքսֆորտի տառապանքներ
ձերբակալուեցան. Վալիսիոյ մէջ եւս նոյն-
այն ձերբակալուեցան օտար զինուորացիներ,
ոյ՞ք, հաւանօրէն լոկ զգեստներն զիւղացի
խօյ իրենք տարբեր դատարարքի պատկա-
նոյ, տարածուելով ժողովուրդի մէջ կը
պատրաստեն կռուան օրթոթոթութեան
համար:

—Աւստրիոյ կառավարութիւնը կը մըռնէ
թէ Աւստրիոյ համար վտանգն հետզհետէ
սպառնալից կը լինի եթէ ազգայնութեանց
գաղափարներու դոհացում չտրուի. չէ՛սե-
րու լեզուն այսուհետեւ Պոհմիոյ դատա-
րաններու առաջ գերմանականին համապա-
տիւ պիտի համարուի: Աւստրիոյ Աւագաց
Ժողովը վերջնական վճիռ տուաւ ի մեծ
կատաղութիւն գերմանական կռուակցու-
թեան: Աւստրիոյ դատական նախարարը
վճռած էր թէ՛ Պոհմիոյ դատարաններու
մէջ թէ՛ չէ՛ս եւ թէ՛ գերման լեզուը հա-
ւասարակցէ կրնան գործածուիլ. խնդիրը
Խորհրդարանին առաջ ելաւ եւ հասաւ վեր-
ջապէս Աւագաց Ժողովը: Նիստն հանդի-
սաւոր եղած է. Ժողովականը ամբողջու-
թեամբ ներկայ էին ըմբռնելով խնդրոյն
կարեւորութիւնը: Պ. Շմերլինկ յարձակե-
ցաւ ընդդէմ դատական նախարարին, սա-
կայն Ժողովը իւր քուէն տուաւ ի նպաստ
նախարարին: Ազգայնութեան գաղափարը
կարեւոր յաղթանակ մը տարաւ:

Օ Ր Ա Գ Ի Ր

Մայիս 3 կիրակի օր տեղի ունեցաւ ի
Բերա, բացումն հայ իգական Արուեստա-
նոցի որ զետեղուած է Թաղ. Խորհրդարանի
կից: Հանդիսին կը նախագահէր Ս. Պատ-
րիարքը: Ներկայ էին Հայրիկ, Խորէն, Սիմոն,
Հմայեակ Սրբազանը, ինչպէս նաեւ բազ-
մաթիւ հրաւիրեալք, ուսուցիչք, զրադէտք,
խմբագիրք, վաճառականք եւ սեղանաւորք:
Իգական սեռն ամենաշատը կերպով ներ-
պրծնելով ներկայացուած էր: Հանդիսին բացու-
մը տեղի ունեցաւ Նուրեան Էֆէնտիի ա-
տենախօսութեամբ յորում կը պարզէր զըլ-
խաւորապէս Արուեստանոցի նպատակն եւ
զայն իրագործելու համար ձեռք առնուած
միջոցները: Նուրեան Էֆէնտի յետոյ ա-
տենաբանեցին Պ. Գր. Նիկողոսեան եւ
Հայրիկ: Հայերէն եւ թուրքերէն երգերը
կընդմիջէին ատենաբանութիւնքը: Հան-
դէսը փակեց Ս. Պատրիարքը լաւ ատենա-
բանութեամբ:

Արուեստանոցը պիտի կարենայ պարու-
նակել իւր մէջ մօտ հարիւր աշակերտ, ո-
րոց տեսուչ կարգուած է Տիկին Մատակ-
եան:

—Կրօնական Ժողովը Բ. չըմանը մտած
լինելով կազմեց իւր նոր Դիւանը: Խրիմ-
եան Սրբազան Ս. ատենապետ. Հմայեակ
Սրբազան Բ. ատենապետ. Ասլանեան Ներ-
սէս վարդապետ Ա. ատենադպիր: Շիշման-
եան Իգնատիոս վարդապետ: Բ. ատենա-
դպիր ընտրուած են:

—Վանայ Պատր. Փոխանօրդ Գրիգորիս
եպիսկոպոս հրաժարական տուած լինելով,
Վանայ Խառն Ժողովը Տեսուչ Խորհրդոյ
հետ միանալով հեռագրաւ խնդրած են
Վարչութեանէն չընդունել Սրբազանի հրա-
ժարականն: Ազգ. Վարչութիւնն արդէն
այդ հրաժարականն ի նկատ առած լինելով
մերժած էր զայն: Ս. Պատրիարքը Վար-
չութեան այս որոշումն հաղորդելով Գրի-

գորիս եպիսկոպոսին հրաւիրեց զնա շարու-
նակել զիւր պաշտօնը:

—Փափաղեան Ստեփան Էֆէնտի Գում-
գաբուի Մայր-վարժարանի ընդ հանուր տը-
նօրէն անուանեցաւ: Ս. Պատրիարքը Մայր
եկեղեցւոյ Թաղ. Խորհրդարանն երթալով
յատկապէս շնորհաւորեց Փափաղեան Էֆի
պաշտօնը:

—Նաթանեան Մարկոս Էֆէնտի Պոլիս
հասաւ երկուշաբթի օր, ոստիկանութեան
հսկողութեամբ եւ ուղղակի ի բանտ տար-
ուեցաւ ուր կը մնայ մինչեւ որ որոշուի իւր
աքսորավայրը:

—Կրօնական Ժողովը որոշած էր որ Պո-
լիս բերուի Մաղնիսայի. Շահապղեան Յա-
կոբ վարդապետն ի զմիտ Սաղնորդարանը
պատասխանած է Կրօն. Ժողովոյ թէ՛ կա-
րելի չէ Պոլիս զրկել Շահապղեան վարդա-
պետը, վասն զի Մաղնիսայի մէջ երկա-
նակութիւնք կը ծանրն: Կրօն. Ժողովը իւր
վերջին նստին մէջ պնդեց իւր որոշման
գործադրութեան մասին:

—Արմաշու Վանուց պարտքի խնդիրը
չորեքշաբթի օր կարգադրուեցաւ Պատրի-
արքարանի մէջ: Վանքն 815½ օսմ: ոսկի
պարտական լինելով, նոյն գումարին 400
ոսկին վճարեց Միքայէլ Էֆ. Յակոբեան եւ
մնացածը վանքը վճարեց ծախելով արծաթ
եւ արջաւ:

—Արմաշու Վանայից կը հաղորդէ
թէ՛ ուխտաւորաց երթեակներէն ժա-
մանակ լինելով ամէն միջոց ձեռք առնուած
է որպէս զի ճանապարհներու կտտարեւա-
պէս ապահովութիւն արիւն:

—Ազգ. Վարչութեան որոշմամբ Երուսա-
ղեմայ պարտուց հանգանակութիւնն ի Պո-
լիս, ուղղակի Ազգ. Պատրիարքարանի մի-
ջոցաւ պիտի կատարուէր: Արք. Ազգային
Պատրիարքարանը մայիս 15-ն սկսած է կա-
տարել Երուսաղեմայ պարտուց ի նպաստ
հոստատեալ տրոց գանձումը:

Տեղական մամուլը կը հրատարակէ հե-
տեւեալ պաշտօնական ազդը:

«Վեհ Սուլթանն հրամայած է որ կայ-
սերական թիկնապահ եւ զինուորական
ընկիջ յանձնաժողովոյ դեր-նախագահ Ալի
Նիզամի փաշա Լոնտոն երթայ Վիթթօրիա
Թագուհւոյն գահակալութեան 30րդ տա-
րեդարձը շնորհաւորելու յանուն Ն. Վեհա-
փառութեան:

—Ըստ մասնաւոր տեղեկութեանց Թա-
րէի, պուլկարական խնդրոյն առթիւ Բ.
Կուռն այս օրերս ընդհանուր չըմբերա-
կան մը պիտի ուղղէ մեծ Տէրութեանց ըով
գտնուող բոլոր օսմանեան գետնանաց:

—Հրամանաւ Վեհ. Սուլթանին, չըմա-
բերութեան մէջ գտնուած արուած քա-
ռօրք մէճիտիլէներն իրենց իսկական ար-
ժէքին որոշուած գներով պիտի հաւաքուին
եւ պիտի յանձնուին արքունի Փողբերանո-
ցին, վերստին կոխուելու համար: Կայսե-
րական սոյն հրամանին համաձայն ծանուց-
ուած է ամէն կողմ որ Մալլէի գանձն եւ
գաւառաց գանձերը պէտք եղած օրինա-
կան գործողութիւնները կատարելէ յետոյ
որոշեալ գնով ընդունին այդ տեսակ քա-
ռօրք մէճիտիլէներն:

Այս որոշում պիտի գործադրուի յառա-
ջիկայ շաբաթէն սկսեալ:

—Եգիպտական խնդրոյն համար բա-
նակցութիւնք բարձր վիճակի մէջ են եւ
հաւանական կ'երեւի թէ մինչեւ երկու շա-
բաթ վերջ գտնեն:

—Բեդերսպուրկէն առնուած հեռագրի
մը վրայ, ուստական հիւսիստօրը շաբաթ

օրը կը հրաւիրէ զՊ. Նովիճքի, Նովիճքի Վեհ-
փայի Կ. Պոլսոյ Թղթակիցն, հիւպատոսա-
րան ներկայանալ, ուր անմիջապէս կը ձեռ-
բակալեն զնա: Մի եւ նոյն ժամանակ, հիւ-
պատոսարանի բարձրագոյն պաշտօնեայ մը,
երեք գովառներու ընկերակցութեամբ ա-
նոր բնակարանը կ'երթայ, ուր կը գտնը-
ւէին իւր կիներն եւ աղջիկն, եւ այս վերջին-
ներն ալ կը ձերբակալէ, կնքոյ ներքեւ առ-
նըլով բոլոր Թուղթերն որք հիւպատոսա-
րան կը փոխադրուին:

Երկուշաբթի, միջօրէին, Պ. Նովիճքի,
կիներն ու աղջիկը Ռօսթաշ շողեանաւով Օտեսա
ղրկուեցան: Թէեւ Օր. Նովիճքի ազատ
Թողուած էր, սակայն չէ ուզած վայելել
այդ ազատութիւնն, յայտարարելով թէ իւր
հօր պիտի հետեւի ուր որ երթայ նա: Ձեր-
բակալեալք ուղակի Բեդերսպուրկ պիտի ղըր-
կուին: Ձերբակալուեք է իւր Թղթակցու-
թեանց պատճառաւ յորս ծայրայեղ ազա-
տական գաղափարներ յայտնած էր:

ՇԱՐԱԹԱԿԱՆ ՀԵՌՈԳՐԱԼՈՒՐԻ

Բեդերսպուրկ, 14 մայիս

Ձարն հրամայեց ուսն լեզուին բացար-
ձակ գործածուել պալթիկեան նահանգնե-
րուն լիկեոնաց եւ կրթարանաց մէջ:

Կը կարծուի թէ Ձարն եւ Ձարուհին այ-
սօր պիտի մեկնին Տօնի նահանգը:

Ռուս լրագիրք կըսեն թէ Պիլմարք իշ-
խան Ռուսիոյ մեծագոյն թշնամին է եւ թէ
լաւագոյն է դաշնակցութիւն մը Ֆրանսա-
յի նոյն իսկ Անգլիոյ հետ, բան դաշնակ-
ցութիւն մը Գերմանիոյ հետ:

Պերլին, 14 մայիս

Գերման կառավարութիւնն որոշեց ա-
ւելցնել Մէճի, Սղրագուրկի եւ Բողէնի
ամրութիւնները:

Բեդերսպուրկ, 16 մայիս

Բեդերսպուրկի Վեհփայի լրագիրքը կը
ծանուցանէ թէ Կայսրն ու Կայսրուհին,
ընկերակցութեամբ գահաժառանգ իշխանին
եւ Կէորկ սեծ-դքսին, երէկ մեկնեք են
Ռուսիոյ հարաւակողմը:

Բարիդ, 16 մայիս

Երեսփոխանաց Ժողովը վաղը պիտի վի-
ճարանի Երմտացոյցի յանձնաժողովոյ տե-
ղեկագրին վրայ:

Մուսկուա, 16 մայիս

Ձարն եւ Կայսերական ընտանիքն, որք
դէպ ի հարաւ կ'երթան, այս առաւօտ
Մոսկուայէ անցան:

Աթէնք, 16 մայիս

Երեսփոխանաց Ժողովը այսօր ընդունեց
կառավարութեան ներկայած 35 օրինական
ծրագրեր:

Այդ ծրագրոց մէջ կը գտնուի Աւստ-
րիոյ եւ Յունաստանի միջեւ կնքեալ առեւ-
տրական դաշնագիրը:

Բարիդ, 18 մայիս

Հաւանական է որ Հանրապետութեան
նախագահը կոչէ զՊ. տը Ֆրէսինէ՝ նմա ա-
ռաջարկելու համար նոր նախարարութիւնը
կազմելու պաշտօնը: սակայն, ի նկատ առ-
նըլով Երեսփոխանաց Ժողովոյ խմբակներուն
կարծեաց գանգաւորութիւնն, ստոյգ չէ որ
Պ. տը Ֆրէսինէ ընդունի:

Պատեհականը մասնաւորապէս շատ հա-
կառակ են Ձօր. Պուլանժէի պահպանման
նոր նախարարութեան մէջ:

Բարիդ, 19 մայիս

Հանրապետութեան նախագահը խորհրդ-
դակցեցաւ Երեսփոխանի եւ Երեսփոխանաց
Ժողովոյ նախագահներուն հետ նախարա-
նական տաղնապին վրայ: Ապա տեսակցե-

ցաւ Պ. Պրիստնի և Ելմոսցոյցի Յանձնաժողովոյ նախագահ Պ. Ռուվիէի և ուրիշ քանի մը քաղաքական անձանց հետ : Այսօր պիտի խորհրդակցի Պ. տը Ֆրէսիէի հետ :

Բարիդ, 19 մայիս

Տէպա կը կարծէ թէ Պ. տը Ֆրէսիէն պիտի ընդունի կազմել նոր. նախարարութիւնըն, որ չը պիտի պարունակէ Պ. Կոպլէի նախարարութեան ոչ մէկ անդամը :

Բեռլին, 18 մայիս

Ձարն եւ կայսերական ընտանիքն երէկ Նովոքէրապը հասան, ուր հանդիսաւոր ընդունելութիւն մը գտան :

Սերպիոյ Նաթալի թագուհին և զահա-ժառանգ իշխանն այսօր Օտէսա հասան :

Ա. Զ. Դ.

ԲԻԻԶԱՆԴԻՆ ԳՐԱՏՈՒՆՆ ԵՐ Ի ՂԱՂԱ-թիա Սեդրու խան, թիւ 5 եւ Պոլսոյ կողմ Զ. Կ. ԹԱՐՈՍԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ. որ ի Պահ-ճէ-Գարու (Մաքսիմ կարգը թիւ 46) պա-տիւ ունի ծանուցանել արդոյ հասարա-կութեան թէ այս օրէն սկսեալ պատրաստ են եւրոպական այլ և այլ լեզուներէ պատ-մական, մատենագրական, աշխարհագրա-կան, մաթեմատիկական, բժշկական, և ման-տաբական ամեն տեսակ գրեւորք և ամ-սաթերթը, ինչպէս աշխարհացոյց տախտակ-ներ և ուրիշ գիրքերն իւրեք մը պիտոյը բերել տալ լաւագոյն գիներով, մեծ թէ փո-քոր քանակութեամբ :

Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառաց մէջ գտնուող գաղտնիքներն ինչպէս և ամեն կար-գի անհատներէ յանձնարարութիւնը կ'ըն-դունան և կը կատարուի ճշդ ու թեմամբ և յոյժ պահանջովն պատմաներով :

Աւելի մանրամասն տեղեկութեանց հա-մար դիմել երեքշաբթի և շաբաթ օրերը միայն Բիւզանդեան գրատուն որ ի Ղաղա-թիա Սեդրու խան թիւ 5, եւ ամեն օր Զ. Կ. Թարոսեանի գրատունն որ ի Պոլս մաք-սին կարգը թիւ 46 :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ ՄԱՐԿԱՐԻՏ ԱՐԲԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԿՆՆՅՈՅ

Գրեաց

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Երբեք պարտաւորութիւն, հոգի և խառն

Կը ծախուի բոլոր հայ գրաւաճառաց քով, ի գին 5 դրուշի. կեդրոնատեղին է Ձարդարեան գրատուն, ի Կ. Պոլս. Սուլ-թան Համամ, թիւ 14. — Շատ գնողաց գոհացուցիչ գէղջ :

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ (մտաւոր և գրաւոր). պատրաստեալ նոր և գիւրտացոյց ոճով, համեմայն արդի ման-կավարժութեան պահանջմանց : Աշխատա-սիրեաց Յ. Գ. Փալագաշեան :

Ա. և Բ. տարիներ միասին կազմուած. Գ. Տպագրութիւն բարեփոխեալ և յա-ւելեալ : 5 դրուշ :

Գ. տարի, 5 դրուշ :

Ա. և Բ. Գ. տարիներ միասին կազմուած, 5 դրուշ :

ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՔ. Լրացուցիչ փասն Գ. տարւոյ թուագրութեան. 2 դրուշ :

Կը գտնուին ամեն գրաւաճառաց քով : Կեդրոնատեղին է Մարգարեան Գրատուն :

1—6

ՀԱՆՐՈԳՈՒՏ ԱԶԴ.

Պէշիկթաշ Գէոյ-իչի, Խաւ-Ֆրունի դէմ Հաճի Ստեփան աղայի թիւ 47 խանութին մէջ կը ծախուի

ԽՈՋՆԷ ՄՈՒՇԱՄՊԱՍԸ

որ ամենազդու դարման մէ մէջքի ցաւի համար : 4—5

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՅ

ԵԼԵԿՏՐՈ-ՆՈՑՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂԵՐՈՒ

Հեռե-եւոյ հիւանդանոցի համար

ԳՆԴԱԿՆԵՐ Արեան պահապանութեան և ընդ-հանուր տկարացման համար.

ԳՆԴԱԿՆԵՐ Խոյլի համար (արեան հիւան-դութիւնը).

ԳՆԴԱԿՆԵՐ Յօդացաւորու համար.

ԳՆԴԱԿՆԵՐ Տենդերու համար.

ԳՆԴԱԿՆԵՐ Ամոքելու և զօրացնելու հա-մար խուչափողերը, թոքերը.

ԳՆԴԱԿՆԵՐ Ստամոքսի որդերու դէմ.

ԳՆԴԱԿՆԵՐ Հնտախտի դէմ.

100 Գնտախտերու գինն է 5 դրուշ :

Կը ծախուին Դեղագործական Մթերա-նոցն, Ղալաթիոյ մեծ փողոց, 55, Թրամ-ուէից կայարան :



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՇԽԵՐՇԵՐԵՆՈՒԹ ՄԼՏ. ՆՈՐՈԳՈՐԸ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը : Գլխու թեփը շուտ մը աներկութիւն կ'ընէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի :

“Մէկ շիշը կը բաւէ :” Եւր փորձը ունեցան ամենքը որոնցմոխրագունած մազերը իրենց բնական գոյ-նին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :

“Կերկ չէ, և ամենեւին գեան մը չընէր : Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր Մ. Ա. ԱԼԼԵՆԻՆ :”

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). “Երբեք և Երբեք” : Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղա-գործներու և անգղիացի դեղագործներու քով :



ՀԱՐՄԱՆԵԿԸՆ ԵՒ ԿԵՐԱՎՈՐՈՒՄ

ԳԵՂԵՑԿԵՆՈՒՆՈՂ ՄԼՏՄԱՆՈՅ ԳՈՅՆԸ, ՍԻՇՏ ԵՒ ԿԵՐԱՎՈՐՈՒՄ, ՍԻՇՏ ԹԱՐՈՒՄ :

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիութիւնը և բազմաթիւ փոշի-ներէ : Երբեք անգամ դորձած լոյսն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ երեսը, վիզը, թեւերը և ձեռքերը պիտի առ-նուն անոյշ փափկութիւն մը և մարմարիոնի փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ : Սպարդի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն : Ընհետ կ'ընէ միմիկ սեւեւը, երեսի և ձեռքի ցանքը, արեւոյ-րուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն : Եւ աս ամեն բանով անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). “Երբեք և Երբեք” : Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով :



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒՄ :

ՄԼԵԼՐՈՐ

ՄԼՏԵՐՈՒ ՄԼԿ ՀԵՏԻԿ ՆՈՐՈԳՈՐԸ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ մազերը : Կը դադրեցունէ անոնց թափելը : Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճում, փայլ ու գեղեցկութիւն կուտայ :

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa apton Row). “Երբեք և Երբեք” :

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբայրք բրիտանական դեղարանը, բերա, Մեծ փողոց : Էմմիլիո Քարուս, Ամստըրդամի մթերանոց, Երեսէք Գալլուրըմ, և Ի-զիտոր Լագանտէլա 453, բերա Մեծ փողոց :

